

Այս է արդէն արեւելեան արդի ձեւն ալ: — Բնականապէս կար նաեւ «խռչիկ կատս սայիցն» (Վեցօր. 80), զոր վերագրելու ենք ուրիշ անօթոց ալ, համեմատ նաեւ արդի սովորութեան:

Սակ: Նախորդին փոքրը, եւ ըստ հընչման զուգադիպութեան՝ կարծես անոր սանը կամ աշակերտը, — զի բառիս օտար ծագումն անծանօթ է, — ունէր մի եւ նոյն պաշտօնն ալ (Թագ. Ա, Բ, 15. Բ, ԺԷ, 28. Մնաց. Բ, ԼԵ, 13. եւն), յայտնի նաեւ Վեցօրէից սա բացատրութեան մէջ. «Զկատսայս եւ զսանս լի ջրով եռացեալս ի հրատի» (79): Զեւով եւս նոյնպէս է նախայիշեալ եգիպտական քանդակաց մէջ, բայց խորութիւնը հաւասար լայնութեան, այս ինքն համեմատ այժմենին. մինչդեռ արեւմտեայց մէջ իւր հոմանիշը λέβης (ըստ Ս. Գրոց) էր տափարակ գնդաձեւ, եւ չորս արուեստական կանթերով (Դար. Գ, 1000). Թէեւ եգիպտականաց մէջ այս ձեւն ալ կայ:

Պոյտն: Այսպէս գրուած է սովորաբար (Թիւք, ԺԱ, 8. Դատ. 2, 19. եւն), եւ տեղ մը նաեւ «պտունս» (Ոսկ. Թղթ. Ա, 603), որ պոշտն եզակի մը կ'ենթադրէ: Հոմանիշ է յն. χύτραին, որ էր խեցեղէն կամ մետաղեայ, գնդաձեւ, բերանը